*Регион и мир, 2019, № 3*

# Մասնակցային ժողովրդավարության արժեքային համակարգի բազմաչափությունը

*Մովսիսյան Մ. Ռ.*
*ՀՀ ՊԿԱ քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոն (Հայաստան, Երևան)*
movsisyanmarine8@gmail.com

**Վճռորոշ բառեր՝** Մասնակցային ժողովրդավարություն, ներկայացուցչականություն, քաղաքական փոփոխություն, կերպափոխվող հասարակություն, քաղաքական զարգացում, ազատություն, քաղաքական որոշում:

## Разномерность системы ценностей партиципаторной демократии

*Мовсисян М.Р.*
*Академия государственного управления Республики Армения (Армения, Ереван)*
movsisyanmarine8@gmail.com

**Резюме:** Автор считает, что в контексте времени партиципаторная демократия от прямой демократии до избирательной – имеет одно превосходительное сходство – это гражданская и государственная ответственность и выработка критического отношения к различным политическим силам.
**Ключевые слова**: партиципаторная демократия, представительность, политические изменения, преобразуя общество, политическое развитие, свобода, политическое решение

## Multiplicity of the value system of participatory democracy

*Movsisyan M.R.*
*Public Administration Academy of the Republic of Armenia (Armenia, Yerevan)*
movsisyanmarine8@gmail.com

**Abstract:** The article analyzes the evolution of the value system of participatory democracy. The author believes that participatory democracy, from direct democracy to electoral, has a supremacy role in the context of time, it is civil and political responsibility and the elaboration of critical attitude towards various political forces.
**Keywords:** participatory democracy, representation, political change, transforming society, political development, freedom, political decision.

Նոր աշխարհակարգում տեղի ունեցող հարահոս քաղաքական փոփոխությունները մեծացրել են մասնակցային ժողովրդավարության արժեքային համակարգի բազմաչափության և վերջինիս դրսևորման առանձնահատկությունների ուսումնասիրման անհրաժեշտությունը: Քաղաքական փոփոխությունն ինքնին բարդ և բազմամակարդակ գործընթաց է, որը ենթադրում է հասարակական և քաղաքական համակարգերի փոխներդաշնակ կերպախոխում: Այս համատեքստում հետխորհրդային երկրներում, հատկապես Հայաստանի Հանրապետությունում, գերակա նշանակություն ունեն մասնակցային ժողովրդավարության զարգացման հիմնախնդիրները, քանի որ ի սկզբանե գծային զարգացում ենթադրող ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող հասարակություններում ստեղծվել է քաղաքական վարչակարգերի, իշխանության բաշխման և վերարտադրման կառույցների չափազանց լայն տարրապատկեր, ձևավորվել են տարբեր քաղաքական համակարգեր[1]:

Քաղաքական գիտության մեջ ժողովրդավարական անցման գործընթացների համակողմանի ուսումնասիրության նպատակով փաստել ենք, որ մասնակցային ժողովրդավարությունը քաղաքական ժամանակի և տարածության մեջ արժեքային էվոլյուցիայի է ենթարկվել: Մասնակցային ժողովրդավարության առաջամարտիկներն են հին հույները, որոնց ուղիղ ժողովրդավարությունը մասնակցային ժողովրդավարության առանձնահատուկ մոդել է, ինչը հնարավորություն էր տալիս Ագորայում հրապարակային մասնակ-

[1] **Մարգարյան Մ. Մ.**, Անցումային հասարակությունների ժողովրդավարացման գործընթացի առանձնահատկությունները, «21-րդ ԴԱՐ», թիվ 4(6), 2004թ., էջ 111-113:

ցել և քննարկել պոլիսի կառավարման վերաբերյալ ընդունվող որոշումների գործընթացին[2]: Պետության ձևավորումը հիմնվում էր քաղաքացու հայեցակարգի վրա (թե ո՞վ է համարվում քաղաքացի): Քաղաքացին, Արիստոտելի բնութագրմամբ, նա է, ով կարող է մասնակցել տվյալ պետության օրենսդիր և դատական իշխանության իրականացմանը[3]:

Այդ համատեքստում ի սկզբանե կարևորվեցին մարդու իրավունքները՝ որպես մարդկային համակեցության գերակայություն, պետության արդյունավետ գործունեության հիմնական ուղղություն և մարդու ազատության վկայություն: Հիմնվելով այս մոտեցման վրա, արդեն ք.ծ. 14–րդ դարից ժողովրդավարությունը ընկալվում էր որպես ազատության դրսևորման ձև[4]: Մարդու իրավունքները կարևորվել են դեռևս Հին Հունաստանում և Հին Հռոմում՝ փաստարկվելով որպես օրենքի ու օրինականության արժեք: Մարդկության ողջ պատմությունը մարդու անընդհատ պայքարն է պետության հետ՝ առավել շատ իրավունքներ ու ազատություններ ձեռք բերելու համար, որը ներառում էր արդեն իսկ ձեռք բերված իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով նորագույն արդյունավետ մեխանիզմներ ստանալու միտում: Այդ առումով առաջին փաստաթուղթը, որ հստակեցրեց և համակարգեց պետության և մարդու գործունեության սահմանները, պետական կառավարման գործընթացում ունեցած պատասխանատվության մակարդակը Ազատությունների մեծ խարտիան (Magna Carta, 1215թ.)[5] էր, որի շրջանակներում հիմնավորվեց իրավախախտման և պատժի համաչափության, պատշաճ իրավական ընթացակարգերի, անմեղության կանխավարկածի, խոսքի, կրոնի ազատության, ազատ տեղաշարժման իրավունքի սկզբունքները: Հետագայում մարդու և քաղաքացու իրավունքների սկզբունքները զարգացվեցին հետևյալ փաստաթղթերում՝ Հաբեաս Կորպուս Ակտում (Habeas Corpus Amendment Act 1679թ.), Իրավունքների մասին բիլլում (The Bill of Rights, 1689թ.)[6], ԱՄՆ Անկախության հռչակագրում (The Declaration of Independence United States Code, 1776թ.)[7], Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում (Ֆրանսիա, 1789թ.)[8] և այլն: Նշված փաստաթղթերից յուրաքանչյուրը յուրովի հիմնված է բնական իրավունքի տեսության վրա: Ըստ Ռուսսոյի՝ յուրաքանչյուր անձ ունի ինքնուրույն կամք և շահեր, որոնք բնական ազատություններ են, և որոնց իրականացումը կարող է չհամընկնել ընդհանուրի կամքի և շահերի հետ: Վերջիններս տարբեր դարաշրջաններում ունենալով հստակ իրավական, քաղաքական, տնտեսական ազդեցություն հասարակության վրա, բարձրացրին մասնակցային ժողովրդավարության խնդիրը: Ավելի ուշ՝ սկսած 17-18-րդ դարերից, երբ քաղաքացու և մարդու իրավունքները սկսեցին արդիականանալ, փոխվեցին նաև Ազատությունների մեծ խարտիայի 39-րդ հոդվածի մեկնությունները: Որպես օրինակ դիտարկենք իրավունք-

[2] История политических и правовых учений: Учебник для вузов. 4-е издание. Под общ. ред. В.С. Нерсесянца. Изд. НОРМА. М.. 2007. С. 64-67.

[3] Նույն տեղում:

[4] International Human Rights Protection; Accessed February 21 2010; Available at: www.cdphrc.uottawa.ca/eng/doc/interweb/sitesint_e.php.

[5] Մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ նախնական իրավական ձևակերպումներն առաջին անգամ տեղ են գտել 1215թ. Անգլիական «Մագնա Կարտա» կոչվող փաստաթղթում: Պայմանագիր անգլիական թագավորի և բարոնների միջև: Այդ պայմանագրով երաշխավորվում էր, որ ազատ մարդիկ չեն կարող ձերբակալվել, բանտարկվել կամ զրկվել իրենց ունեցվածքից այլ կերպ, քան դատարանի օրինական վճռով: Այլ կերպ ասած՝ դրանով կաշկանդվեց թագավորի կամ այլ արտոնյալ անձանց իրավունքը, որով մինչ այդ նրանք կարող էին ազատ մարդկանց կամայականորեն զրկել ազատությունից կամ ունեցվածքից:

[6] 1689 թ. անգլիական իրավունքների բիլլը պայմանագիր էր անգլիական պառլամենտի և թագավորի միջև: Այս պայմանագիրը նախորդի նման իրավունքներ էր վերապահում մարդկանց միայն մեկ խմբի, բայց այն շարունակեց «Մագնա Կարտա»-ի տրամաբանությունը և թագավորի ու այլ արտոնյալների կամայականություններից պաշտպանվելու վահան ստեղծեց մարդկանց այդ խմբի համար, քանի որ դրանով ուղղակիորեն ճանաչվում էր մարդկանց տվյալ խմբի ինքնիշխանությունը, ինչը բացառիկ կարևորություն ուներ:

[7] 1776թ. Ամերիկյան անկախության հռչակագրով սահմանվեց, որ բոլոր մարդիկ ստեղծված են հավասար, ովքեր Արարչի կողմից ստեղծվել են որոշակի անօտարելի իրավունքներով օժտված: Դրանց թվում են կյանքի, ազատության և երջանկության ձգտման իրավունքները:

[8] 1789 թ. Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագիրը նույնպես արձանագրեց, որ մարդիկ ծնվում են ազատ և ունեն հավասար իրավունքներ, որ յուրաքանչյուր քաղաքական կազմակերպության նպատակը մարդու բնական և անօտարելի՝ ազատության, սեփականության, անվտանգության և բռնություններին դիմադրելու իրավունքների պաշտպանությունն ու պահպանությունն է:

ների մասին պետիցիան, որն ընդունվեց 1628թ. շնորհիվ Էդվարդ Կոկի, շատ մասնագետների կողմից համարվում է երկրորդ Մագնա Կարտա, և այնտեղ արդեն խոսվում էր հպատակների ազատության մասին: Եթե 1215թ. 39-րդ հոդվածում ասվում էր «ազատ մարդկանց իրավունքներ», ապա այստեղ ասվում է «հպատակների ազատություն»: Այս «հպատակ» հասկացությունն արդեն իսկ ներառում էր հասարակության բոլոր խավերը՝ ներառելով ճորտերին, գյուղացիներին և այլոց, որոնք ևս ունեն իրավունքներ և ազատություններ: Ազատությունների մեծ խարտիան, ըստ էության քաղաքական ազատության և մասնակցային ժողովրդավարության ներդաշնակություն էր, որն ընդարձակեց երկրի քաղաքական զարգացման ժողովրդավարական տարածությունը:

Մասնակցային ժողովրդավարությունը «սկզբունքորեն կենտրոնանում է ոչ թե մեծ, այլ փոքր տարածքների վրա, տեղական մակարդակի ժողովում, տեղական ժողովրդավարական համայնքների մշտական պլեբիսցիտի վրա: Նման ժողովրդավարությունը վերարժևորեց պոլիսային Ագորայի պատկերն, որտեղ քաղաքացիները որոշումներ կայացնելու իրավունքը չեն տալիս «ներկայացուցիչներին», այլ այդ որոշումները կայացնում են հենց իրենք: Փաստորեն, քաղաքական մասնակցության առանձնահատկությունը ժամանակային ձագարն է: Համաձայնելով ժամանակակից սոցիոլոգ Է. Սյուի առաջարկած «Երրորդ ժամանակ» հասկացության հետ, նշենք, որ քաղաքական մասնակցությունը սոցիալական ժամանակի կատեգորիա է՝ սոցիալական գործունեությունը և դրա կիրառման դաշտն ապահովող, որն առանց ստեղծագործական, սոցիալական ջանքերի, սպառնում է մեզ շրջապատող տարածքը վերածել քաոսի կամ սոցիալական ջունգլիների:

Նկատի ունենալով հետխորհրդային նորանկախացած երկրների ժողովրդավարական անցման փորձը, կարծում ենք պետք չէ համաձայնել ռուս հետազոտող Գրաչեվի հետ, համաձայն որի այս մոդելի թերությունները կապված են« ուղիղ ժողովրդավարության արդյունավետ և մշտական ինստիտուտների ստեղծման անհնարինության հետ՝ ինչպես տարածական, այնպես էլ ժամանակային պարամետրերի և առարկայաենթակայական հարաբերությունների հետ[9]: Ուղիղ ժողովրդավարությունը բոլոր դեպքերում չէ, որ կարող է լինել որոշումների կայացման արդյունավետ եղանակը թե՛ ազգային, թե՛ տեղական մակարդակով: Հետևաբար, ազգ-պետությունում, նույնիսկ փոքր պետություններում, մասնակցային ժողովրդավարության շարունակական և հաջող կիրառության հավանականությունը անհրաժեշտ է բարձրացնել:

Ամերիկացի քաղաքագետ Բ. Բարբերը նշում է, որ «Ուղիղ ժողովրդավարությունը պահանջում է ոչ միայն մասնակցություն, այլև քաղաքացիական նախապատրաստում և **առաքինություն**՝ որոշումների քննարկման և ընդունման գործընթացում արդյունավետ մասնակցություն ունենալու համար: Այսպիսով, **մասնակցային ժողովրդավարությունը ընկալվում է որպես կրթված քաղաքացիների անմիջական իշխանություն**: Քաղաքացիները ոչ միայն մասնավոր ոլորտում գործող անձինք են, այլև լավ տեղեկացված հանրային քաղաքացիներ, որոնք զերծ են մասնավոր շահերից այնքանով, որքանով՝ հանրայինը մասնավորից: Ժողովրդավարությունը ոչ այնքան ժողովրդի կամ զանգվածների իշխանությունն է, որքան կրթված քաղաքացիների իշխանությունը[10]: Քաղաքական ակտիվությունը մասնակցային ժողովրդավարության մոդելում հիմնավորվում է որպես «փոքրամասնության տիրանիա»-յի դեմ պայքարող ուժ՝ ներքնից[11]:

Ջ. Շումպետերի խոսքերով, մարդիկ երբեք ինքնակառավարվող չեն եղել և չեն կարող լինել: Առավելագույնը, որ քաղաքացիները կարող են իրականացնել, այն է հավանել կամ չհավանել այս կամ այն գործչի վարած քաղաքականությունը: Ժողովրդի համար կարևոր է ոչ թե ռեժիմը, կամ իշխանության կառավարման ձևը, այլ թե ինչպիսի զիջումների կարող են գնալ նրանք հանուն և ի շահ ժողովրդի: Շումպետերը ցույց տվեց, **թե որքան վտանգավոր է պրոֆեսիոնալ քաղաքական գործիչների կողմից անգիտակից զանգվածի գիտակցության մանիպուլյացիան[12]:**

---

[9] **Грачев М. Н., Мадатов А.С.** Демократия: методология исследования, анализ перспектив. М, 2004. С.31.

[10] **Barber B.** Participatory Democracy. // Encyclopedia of Democracy. Vol. 3. New York, 1995. P.923.

[11] **Баранов Н. А.**, Современная демократия: эволюционный подход, С.-П., 2008. С. 60

[12] **Шумпетер, Й.** Капитализм, социализм и демократия / Й. Шумпетер. - М.: БЕК, 1995. - 566с.

Ըստ Շումպետերի ժողովրդավարության արժեքն է քաղաքական մրցակցությունը և ազատությունը ու կա ժողովրդավարության զարգացման 4 նախապայմանի անհրաժեշտություն՝

- անհրաժեշտ է ունենալ բավականաչափ որակավորված ներկայացուցիչներ, որոնք կարող են ընտրվել կառավարության առանցքային պաշտոններում,
- քաղաքական մարմինների կողմից պետք է այնպիսի որոշումներ կայացվեն, որ մարդիկ կարողանան լավ հասկանալ և արտահայտել իրենց վերաբերմունքը վերջիններիս նկատմամբ,
- միջին շերտերից ձևավորված, լավ կազմակերպված, պատրաստված, պատասխանատվության զգացումով բյուրոկրատիայի (պաշտոնյաների) առկայություն, քանի որ այն ավելի լավ կարող է հաղթահարել կառավարական խնդիրները, քան ոչ պրոֆեսիոնալ, էնտուզիազմով գործիչները:
- ժողովրդավարական ինքնակառավարում, որը քաղաքական մշակույթի բաղադրիչ է: Այն ենթադրում է, որ. ա) ընտրողների և խորհրդարանի անդամների բարոյական և մտավոր բարձր մակարդակն անթույլատրելի է դարձնելու իշխանության մեջ մակաբույծ տարրերի ներթափանցումը, բ) խորհրդարանում քաղաքական գործիչները պետք է զերծ մնան իշխանության հետ առճակատումից և փոփոխել իշխանությունը հնարավորության դեպքում, գ)ընտրողները խորհրդարանից դուրս պետք է հարգեն իրենց և իրենց ընտրած քաղաքական գործիչների միջև աշխատանքի բաժանումը՝ մասնավորապես, ընտրողները պետք է հասկանան, որ երբ իրենք ընտրել են քաղաքական գործիչ, որոշումներ կայացնելիս պետք է ցուցաբերեն առավելագույն հանդուրժողականություն, ուստի յուրաքանչյուր պոտենցիալ առաջնորդ պետք է արտահայտի իր դիրքորոշումը: Ցանկացած ժողովրդավարություն սահմանափակ է առանց ռացիոնալ գիտակցված անհրաժեշտության, քաղաքական գործընթացում յուրաքանչյուր մասնակցի կամավոր ինքնասահմանափակման համար[13]:

18-րդ դարի սկզբին առաջ եկան ժողովրդավարության նոր ձևեր ու չափումներ, որոնցից առավել հայտնին ներկայացուցչական ժողովրդավարությունն է, որի էությունն է իշխանության օրենսդիր մարմնի ձևավորումը՝ կազմված ժողովրդի կողմից ազատ ընտրություններում ընտրված ներկայացուցիչներից[14]: **Յուրաքանչյուր քաղաքացի հավատում և վստահում էր իր ընտրած ներկայացուցչին, վստահ լինելով, որ քաղաքական գործընթացներին իր մասնակցությունը փոխելու է իր ազատության մակարդակը:** Սակայն, ժողովրդավարության տեսության փոփոխությունները, ներկայացուցչականության պատճառով, հանգեցրին մի շարք ներքին դժվարությունների: Ներկայացուցչական ժողովրդավարության ինստիտուտները իշխանությանը օտարում են ժողովրդից, ինչն էլ դարձել է մի շարք հետազոտողների քննադատության առարկան:

Ժողովրդավարությունը՝ որպես քաղաքական արժեք, կոչված է արտահայտելու ժողովրդի կամքը՝ ստեղծելով օպտիմալ պայմաններ վերջինս քաղաքականության և կառավարության մեջ արտահայտելու համար: Ժողովրդավարական քաղաքական արժեքները, որպես կանոն, ընդգրկում են փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, հիմնական պետական մարմինների ընտրությունը, քաղաքացիների քաղաքական ազատությունը, նրանց հավասար իրավունքները, օրենքի գերակայությունը, սահմանադրականությունը, իշխանությունների տարանջատումը և այլն: Լինելով քաղաքական արժեք, ժողովրդավարությունն ինքնապաշտպանության ամենակարևոր միջոցներից է, մարդու իրավունքների և ազատության իրականացման պարտադիր պայման, որոնց պետք է հետևի մարդը[15]:Լ. Միզեսը նշում է, որ անհատականության նպատակն է այնպիսի ոլորտի ստեղծումը, որտեղ անհատն ազատ կարող է մտածել, ընտրել և գործել, առանց պետության սահմանափակող միջամտության, զբսպման և

[13] **Бегунов, Ю.К.** 13 теорий демократии / Ю.К. Бегунов, А.В. Лукашев, А.В. Пониделко. - СПб. Бизнес-пресса, 2002. – С. 235.

[14] **Баранов Н.А.**, Современная демократия: эволюционный подход, С.-П., 2008. С. 44.

[15] **Шапиро, И.** Переосмысливая теорию демократии в свете современной политики / И. Шапиро // ПОЛИС: Политические исследования. - 2001. - № 3-5. - С. 6-15.

հարկադիր սոցիալական ապարատի[16]: Ներկայումս չի կարելի բացարձակ ճշմարտություն համարել, որ ժողովրդավարությունը պետք է լինի համընդհանուր կամքի դրսևորում, քանի որ այն կարող է հանգեցնել փոքրամասնությունների վերացմանը՝ հանգեցնելով անվերահսկելի, անսահմանափակ բացարձակ իշխանության հաստատմանը:

Ժողովրդավարական անցման տիրույթներում մասնակցային ժողովրդավարության կիրառելիության խնդիրները նորովի դրվեցին և լուծվեցին՝ ստանալով նոր, էական և ընթացակարգային հատկանիշներ: Նրանք հիմնված են վերածննդի, բարեփոխման, լուսավորության քաղաքական գաղափարների վրա: Նոր ժամանակաշրջանը բնութագրվում է որպես արդիականացման գործընթացի սկիզբ, որն ընկալվում է որպես քաղաքական, տնտեսական և սոցիալական փոփոխություն՝ հասարակությանը վերափոխելով ավանդականից ժամանակակցի: Ժողովրդավարացման քաղաքական փոփոխությունների նախադրյալներն էին քաղաքական համակարգերի ինքնիշխանության ձևավորման գործընթացները և դրանց կառուցվածքի սահմանադրականությունը:

Ուսումնասիրելով ***մասնակցային ժողովրդավարության արժեքային համակարգի բազմաչափությունը,*** ամրագրենք, որ այն արդի ժողովրդավարական տեսությունների մեջ գերակա է՝ ներառելով զարգացման պարույր՝ անցյալ-ներկա դեպի ապագա գնացող, մշակվել է քաղաքագետներ Ռ. Դալլի, Ռ. Ինգլհարթի, Ք. Փեյթմանի, Ք. ՄեքՖերսոնի, Ջ. Ցիմերմանի, Ն. Բոբբիոյի, Փ. Բահրահի, Բ. Բարբերի, և այլոց կողմից, յուրաքանչյուրն ընդգծելով մասնակցային ժողովրդավարության մեկ կամ մի քանի բաղադրիչ: Այս տեսությունն, ըստ էության, վերադարձ է ժողովրդավարության դասական գաղափարներին, ներգրավելով քաղաքացիներին ակտիվ քննարկումների և հանրային կյանքի հիմնական հարցերի վերաբերյալ որոշումների ընդունմանը: Նրանք համարում են, որ սոցիալական հավասարությունը ժողովրդավարական մասնակցության և տարածման կարևորագույն պայման է, համաձայն որի, մասնակցության սկզբունքը պետք է կիրառվի նաև հասարակական կազմակերպություններում, որտեղ մարդիկ արտահայտում են իրենց կամքը, նախևառաջ՝ որպես կոլեկտիվի մաս, ապա՝ **ինքնակառավարվող քաղաքացի[17]:** Այս տեսության համաձայն, ազատությանը, ինքնակառավարման զարգացման հավասար իրավունքին կարող են հասնել միայն մասնակցային հասարակության մեջ, որը բարելավում է քաղաքական արդյունավետության զգացումը և նպաստում հավաքական պահանջներին: Նման հասարակության մեջ քաղաքացիները լավ տեղեկացված են, հետաքրքրված են հասարակական կյանքում իրենց բարձր ակտիվությամբ: Փաստորեն, կառավարությունն ընդամենը գործիք է ընդհանուր կամքի արտահայտման և լուծումներ գտնելու համար: Ք. Փեյթմանի խոսքերով համընդհանուր ֆորմալ իրավունքների և դասի անհամապատասխանությունը, մասնակցայնության մեջ սեռային անհավասարությունը կարող է լուծվել միայն ինքնակառավարվող ինստիտուտների միջոցով[18]:

Մասնակցային ժողովրդավարության ջատագովները վստահ են, որ քաղաքականությունը որպես հասարակական երևույթ ներթափանցում է տեղական (համայնքային, անհատական, անձնական) մակարդակներ՝ **ձևավորելով սոցիալ-քաղաքական ցանց՝ իր տեղեկատվահաղորդակցական հոսքերով և արժեքաբանությամբ:** Այս համատեքստում նշենք, որ ժողովրդավարական անցումը և անցումհամախմբումը մասնակցային ժողովրդավարության այլ արժեքաբանություններ են ենթադրում՝ պայմանավորված քաղաքացիների քաղաքական ազատության ընկալման և պատասխանատվության մակարդակներով: Սակայն, ժողովրդավարությունը միայն խոսքի ազատություն, ընտրություններին մասնակցելու իրավունք չէ: Դա օրենքի իշխանություն է: Ժողովրդավարության հաստատած ազատությունը առանց պատասխանատվության մահանում է[19]: Չնայած որոշ առանձնահատկությունների՝ մարդու ազատությունը և նրա իրա-

[16] **Мизес Л.** Свобода и собственность // Мизес Л. Либерализм в классической традиции / Пер. с англ. А.В.Куряева. М., 2001. С.225.

[17] **Баранов Н.А**., Современная демократия: эволюционный подход, С.-П., 2008.С. 59

[18] **Pateman, Carole** Participation and Democratic Theory Cambridge England: Cambridge University Press (1970) https://is.muni.cz/el/1423/podzim2016/POL401/um/Pateman_Dahl.pdf

[19] **Хантингтон С.**, Третья волна. Демократизация в конце XX века. Пер. с англ. Л. Ю. Пантиной. М., 2003, С. 120.

վունքները շատ հաճախ նույնականացվում են: Ազատությունները այն հիմնական իրավունքներն են, որոնք պաշտպանում են մարդու հնարավորությունը ձևավորել և արտահայտել իր սեփական համոզմունքները, վարել անձնական և ընտանեկան կյանքը առանց հարկադրանքի և պետական միջամտության, և վարվել սեփական որոշումներին համապատասխան[20]: 20-րդ դարի երկրորդ կեսին աշխարհի ժողովուրդների պայքարը ընթանում էր մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Ժամանակակից աշխարհում մարդու իրավունքները հանդիսանում են բնական իրավունքներ և ստացել են ավելի լայն մեկնաբանություն: Միջազգային իրավական փաստաթղթերում ընդունված է մարդու իրավունքները բաժանել առանձին սերունդների.

• Առաջին սերնդին վերաբերում են քաղաքացիական և քաղաքական իրավունքները, որոնք ամրագրված են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագրում: Այդ իրավունքներն ի սկզբանե ամրագրված էին ազգային օրենսդրություններում, իսկ դրանց միջազգային իրավական ամրագրմանը մեծապես նպաստել է Ֆրանսիական մեծ հեղափոխությունը: Ընդունված է համարել, որ այդ սերնդի իրավունքները (կյանքի իրավունք, ազատության իրավունք, անձնական անձեռմխելիության իրավունք, օրենքի առջև հավասարության իրավունք և այլն) համարվում են բնական, անօտարելի և պատկանում են յուրաքանչյուր մարդու ի ծնե, իսկ պետությունը պետք է ապահովի այդ իրավունքների իրականացումը՝ անկախ իր քաղաքական, տնտեսական, սոցիալական զարգացման մակարդակից:

• Երկրորդ սերնդի մեջ մտնում են տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, որոնք ամրագրված են Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում: Այս կատեգորիայի իրավունքների կենսագործման համար (աշխատանքի իրավունք, կյանքի բարենպաստ կենսապայմանների իրավունք, սոցիալական ապահովության իրավունք, հանգստի իրավունք, կրթության իրավունք և այլն) պահանջվում է պետության կողմից որոշակի գործողությունների իրականացում, և դրանց իրագործումը կախված է տվյալ պետության տնտեսական և սոցիալական պայմաններից: Այս իրավունքների ձևավորման գործում հսկայական ազդեցություն են ունեցել 1917թ. Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան մեծ հեղափոխության ձեռքբերումները և այլ երկրներում ծայր առած աշխատավորական շարժումները:

• Երրորդ սերնդի իրավունքների շարքին դասվում են կոլեկտիվ իրավունքները (ազգերի իրավունք, փոքրամասնությունների իրավունք, զարգացման իրավունք, միջազգային խաղաղության և անվտանգության իրավունք և այլն): Այս իրավունքները ծագել են ազգային-ազատագրական շարժումների արդյունքում և ամրագրված են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Գաղութային երկրներին և ժողովուրդներին ազատություն շնորհելու մասին 1960թ. հռչակագրում, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Ազգային և էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին 1984թ. հռչակագրում, 1981թ. Աֆրիկյան խարտիայում, եվրոպական տարածաշրջանային ակտերում և այլն: Մարդու իրավունքների երրորդ սերունդը, ըստ էության, սահմանվում և պաշտպանվում է միջազգային կազմակերպությունների կողմից[21]: Որոշ հեղինակների կարծիքով 20-րդ դարի 90-ական թթ. սկսեց ձևավորվել մարդու իրավունքների չորրորդ սերունդը, օրինակ, Ա.Բ. Վենգերովը այն անվանում է մարդկության իրավունքներ (խաղաղության, միջուկային անվտանգության, տիեզերքի, էկոլոգիական, տեղեկատվական իրավունքներ և այլն): Մարդու իրավունքների չորրորդ սերնդի առաջացմանը զուգահեռ, կձևավորվի միջազգային մարդասիրական իրավունք, աշխարհիկ մարդասիրությունը կդառնա մարդկության բարոյական զարգացման հիմնական ուղիներից մեկը[22]: Վերջիններս հսկում են, որ պետություններն անշեղորեն կատարեն մարդու կոլեկտիվ իրավունքների վերաբերյալ իրենց կողմից ընդունված որոշումները: Հարկ է նշել, որ մարդու իրավունքների տարանջատումը նման սե-

[20] **Այվազյան Վ.**, Մարդու իրավունքներ, Երևան, 2007, էջ 12:

[21] Նույն տեղում, էջ 22-32:

[22] Նույն տեղում:

ռունդների կամ կատեգորիաների խիստ պայմանական բնույթ է կրում[23], գրականության մեջ նման տարանջատումները շատ բազմազան են ու հաճախ չեն համընկնում միմյանց հետ: Մարդիկ գիտակցում են, որ մասնակցությունն առավել արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է մասնակցային ժողովրդավարության մեխանիզմների առավել ուժեղացում[24]:

Գլոբալիզացիան նոր մարտահրավերներ է առաջ բերել գլոբալ, լոկալ և ներքին մակարդակներում, ինչը չի կարող կարգավորվել ժողովրդավարության ձևական մեխանիզմներով: Ու. Բեքի խոսքերով, արդի ժամանակաշրջանը բնութագրվում է **«ռիսկերից խուսափման քաղաքականությամբ»**¦, որտեղ քաղաքականություն մշակողների համար լավագույն միջոցը ավելի շատ քաղաքացիների մասնակցություն թույլ տալն է, ինչը կարդարացնի իրենց կողմից կայացված ցանկացած որոշում: Սա ապահովում է, որ քաղաքականություն մշակողները չմեղադրվեն իրենց կողմից իրականացված քաղաքականության համար, որոնք կարող են ունենալ անբարենպաստ հետևանքներ, քանի որ նրանք միշտ կունենան հնարավորություն պնդելու, որ **քաղաքացիները նույնպես ներգրավված են եղել որոշումների կայացման գործընթացում**: Մասնակցային մոդելի մեջ քաղաքական մասնակցությունն ինքնին նպատակակետ է՝ նպաստելով քաղաքացիների մտավոր և հուզական զարգացմանը: Քաղաքացիների ժողովրդավարական գործընթացում ակտիվ ներգրավվածությունն **ազատության նախապայման է և արտահայտման միջոց:**

Այսպիսով, **քաղաքական մասնակցությունը ունի 2 հիմնական գործառույթ՝**

- Քաղաքացիներին պաշտպանում է վերևից անհիմն կայացված որոշումներից:
- Հանդիսանում է մարդու ինքնազարգացման մեխանիզմ[25]:

Հնարավորինս լավագույն արդյունքի համար ժողովրդավարությունը պետք է տարածվի այլ ոլորտներում ևս, որպեսզի նպաստի արդիականության և մասնակցային քաղաքական մշակույթի անհրաժեշտ հոգեբանական հատկությունների էվոլյուցիայի զարգացմանը, որը կարող է ձևավորվել միայն Ք. Փեյթմանի սկզբունքով՝ «սովորել մասնակցել՝ մասնակցությամբ: Իդեալական մասնակցային հասարակությունը բնութագրվում է կառավարման մեջ քաղաքացիների անմիջական ներգրավմամբ՝ առանց առանցքային քաղաքական և սոցիալական հաստատությունների միջնորդների, հասարակության ղեկավարների հաշվետվողականության և ժողովրդավարական լեգիտիմության ամենաբարձր աստիճանի:

**Քաղաքական մասնակցության ինստիտուտները.** Ժողովրդավարությունը, որպես քաղաքական համակարգի բնականոն արդիականացման գործընթաց քաղաքական որոշումների **ընդունման, իրականացման և մշտադիտարկման ինստիտուցիոնալացված ընթացակարգերի համակարգ է**: Համաձայն Ռ. Դալլի, այդ ընթացակարգերի կիրառումը ենթադրում է որոշակի իրավունքների, պարտականությունների, ազատությունների և սահմանափակումների առկայություն[26], որի իրականացումը հնարավոր է միայն քաղաքական մասնակցության ժամանակակից ինստիտուտների առկայության դեպքում: Քաղաքական մասնակցության ինստիտուտները ներառում են՝ քաղաքական կուսակցությունները, հասարակական-քաղաքական շարժումները, շահային խմբերի այն կառույցները, որոնք միավորվում են «քաղաքացիական հասարակություն հայեցակարգի շուրջ: Քաղաքացիների մասնակցությունը իշխանական հարաբերությունների և կառավարման ժողովրդավարացմանը իրականացվում է պետական ներկայացուցչական կառույցների, ՏԻՄ ընտրությունների, ազգային, տարածաշրջանային և տեղական նշանակության հիմնախնդիրներին ուղղված հանրաքվեներին մասնակցելով, որտեղ կարևոր դերակատարություն ունեն սոցիալական շահերն արտահայտող ու քաղաքական համակարգի հետ արտաքին միջավայրի կապն ապահովող քաղաքական կուսակցությունները: **Փաստորեն, հասարակական-**

[23] Международное право; Ответственные редакторы Ю. М. Колосов, Э. С. Кривчикова; Москва; 2007; С. 536.

[24] **Norris, Pippa**. Introduction: The Growth of Critical Citizens? in Critical Citizens: Global Support for Democratic Governance, ed. Pippa Norris Oxford: Oxford University Press (1999

[25] **Баранов Н.А.**, Современная демократия: эволюционный подход, С.-П., 2008. С. 60-63

[26] **Даль Р.** Принятие решения в демократическом обществе: Верховный суд и его влияние на политический курс государства // Теория и практика демократии. Избранные тексты. М., 2006. С.211.

**քաղաքական ցանցերը ենթադրում են ինստիտուցիոնալ բազմակարծություն, որի կրողներն են կուսակցությունները, ճնշման և շահային խմբերը, գործառութային առումով ինստիտուցիոնալացված ընդդիմությունը:** Կարծում ենք, որ մասնակցային ժողովրդավարության ինստիտուցիոնալ ապահովվածության և զարգացման նկատառումներով ժողովրդավարական անցման գործընթացները Հայաստանի Հանրապետությունում պետք է ուսումնասիրել ըստ Ալմոնդի քաղաքական համակարգերի տեսության: Դա հնարավորություն կտա միաժամանակ համադրել նաև Կ. Դյոչի և Թ. Պարսոնսի համակարգային մոտեցումները մասնակցային ժողովրդավարությանը, քանի որ քաղաքական համակարգը չի կարող կոչվել ժողովրդավարական, երբ բացակայում է ընդդիմությունը, որն էլ կուսակցական բազմակարծության արդյունքում է ձևավորվում: Որպես հասարակության տարբերակիչ՝ աճում է շահային խմբերի դերը, ինչն ըստ ամերիկացի քաղաքագետ Մ. Օլսոնի, շատ քաղաքական գործիչներ դիտարկում են որպես «տնտեսական և քաղաքական վարքագծի հիմնարար սահմանող որոշիչներ[27]: 20-րդ դարի սկզբին Ա. Բենթլին առաջարկել է հասարակությունը դիտարկել որպես« տարբեր շահային խմբերի միավորում (совокупность)[28]: Հետագայում, Դ. Թրումենը քաղաքական գործընթացը բնութագրեց որպես «շահային խմբերի մրցակցության գործընթաց՝ ռեսուրսների բաշխման նկատմամբ իշխանության համար[29]:

Ռ.Դալլը ժողովրդավարական գաղափարների տարածումը քաղաք-պետություններից մինչև ազգ-պետություններ անվանեց երկրորդ ժողովրդավարական տրանսֆորմացիա[30]: Ելակետ ընդունելով Ռ. Դալլի մոտեցումը, կարող ենք հանրագումարել, որ մասնակցային ժողովրդավարությունը զարգանալով պատմության հոլովույթում՝ հիմնականում անգլոսաքսոնական տարածաշրջաններում, արդեն 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին դառնում է այլ պետությունների ժողովրդավարացման գրավականը, ավելին, եթե մեր մոտեցումը փաստարկենք Ն. Լումանի էվոլյուցիոն տեսությամբ, ապա հնարավորություն ենք ստանում քաղաքական պրակտիկայում ժողովրդավարական համակարգը դիտարկել այնպիսին, որտեղ գործում են բոլոր երեք էվոլյուցիոն ֆունկցիաները՝ **տատանումներ, ընտրասերում և վերակայունացում**: Այսպիսով, ժամանակի ընթացքում ամենաարդյունավետ ժողովրդավարական իշխանության որոնումը հանգեցրեց իշխանության ներկայացուցչական, մասնակցային մարմինների ստեղծմանը, որոնք **ձևավորելով խաղի կանոնները վերահսկում են իշխանություններին**: Նման փոփոխություններում կարևորվեց ժողովրդավարական արժեքների ընտրասերման (սելեկցիա) գործառույթը և ամրագրվեց ժողովրդավարական համակարգերի պրակտիկայում:

Հետազոտողները ուշադրության են արժանացրել շահային խմբերի կողմից արդյունավետորեն իրականացվող այն գործառույթները, երբ նրանք ներկայացնում են հասարակության մեջ գոյություն ունեցող շահերի բազմազանությունը՝ տնտեսական, սոցիալական, գաղափարախոսական, արդյունաբերական, կրոնական և այլն: Այդ ներկայացուցչությունը ոչ միայն երաշխավորում է քաղաքական որոշումների կայացման ազդեցիկությունը, այլև ապահովում է տեղեկատվական հոսք և աջակցություն, որն անհրաժեշտ է պետական իշխանության մարմիններին և կառավարմանը:

Նման համատեքստային մոտեցումը հնարավորություն է տալիս բացահայտել քաղաքական մասնակցության նպատակաբանական էությունը՝ ոչ միայն քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ ժողովրդավարացման, այլև **քաղաքացիության կերտման և քաղաքացու պատասխանատվության** խնդիրները: Իսկ դա նշանակում է պատասխանատու լինել սեփական որոշումների նկատմամբ, մասնակցել քաղաքական որոշումների ընդունման, տեղեկատվության հավաքման, իրացման գործընթացներին, և իրականացնել էլիտայի բաց հավաքագրում: Էլիտա, որը կպաշտպանի քաղաքացիների հանրային շահը և հնարավորություն կտա վերահսկել իրեն: Եվ որպեսզի էլիտան հաշվետու լինի բնակ-

[27] **Олсон М.** Логика коллективных действий: общественные блага и теория групп // Политология: Хрестоматия / Сост. Б.А.Исаев, А.С.Тургаев, А.Е.Хренов. СПб., 2006. С.337

[28] **Bently A.** Process of Government. N-Y., 1908. P.38.

[29] **Truman David B.** The Governmental Process. Political Interests and Public Opinion. NY: Knopf, 1971. P.14.an Davmental

[30] **Даль Р.**, Демократия и ее критики / Пер. с англ. Под ред. М.В.Ильина. — М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН). —2003. С.38-51.

չությանը, քաղաքացին պետք է վարվի վարքի ռացիոնալ և ակտիվիստական մոդելին համապատասխան:

Ժողովրդավարական մասնակցության կարևոր գործոններն են այն **քաղաքական պայմանները,** որոնք նպաստում են իրավունքների և ազատությունների իրացմանը, իրավական և նյութատնտեսական այն հիմքերը, որոնք ներառում են նաև անձի ձգտումն արժանապատիվ կյանքով ապրելու, լրատվամիջոցների մատչելիությունը, հասարակության և իշխանության քաղաքական կապի ապահովումը:

Քաղաքական համակարգերի հիմնական բաղադրիչներից է ընդհանուր ընտրությունների ինստիտուտը, որն իրենից ենթադրում է ժողովրդի կամքով իշխող էլիտաների փոփոխության հնարավորություն, իշխանությունը օրինականացնելու և կայունացնելու գործիք՝ ապահովելով ժողովրդական վերահսկողությունը իշխող վերնախավի նկատմամբ: **Հանրայի կարծիքի և քաղաքական ինստիտուտների դինամիկ փոխգործակցությունը քաղաքական կերպափոխման, արդիականացման հիմնական գործոնն է:** Ք.Փեյթմանի կարծիքով,- «ժողովրդավարական պետության գոյության համար անհրաժեշտ է սոցիալապես ակտիվ հասարակություն, որտեղ բոլոր քաղաքական համակարգերը ժողովրդավարացված են և բոլոր ոլորտներում տեղի է ունենում սոցիալականացում՝ զանգվածային մասնակցության միջոցով[31]:

**Մասնակցային ժողովրդավարության հիմնական դրույթներն են՝** հասարակության բոլոր շերտերի ներգրավումը քաղաքական գործընթացներին՝ որոշումների ընդունումից մինչև իրականացում, ոչ քաղաքական ոլորտներում մասնակցության սկզբունքի ընդլայնումը, որոշումների կայացման ապակենտրոնացում, ընտրական գործընթացների պարզեցում: Մասնակցային ժողովրդավարությունը նպաստում է մարդկանց քաղաքականության մեջ մշտական մասնակցությանը (ոչ միայն 4-5 տարին մեկ անգամ), աջակցում է ուղիղ ժողովրդավարության ձևերի ընդլայնմանը (երբ քաղաքացիները կարող են ինքնուրույն մասնակցել քաղաքական որոշումների կայացմանը): Իրականում ժողովրդավարության մասնակցային մոդելը կարելի է բնութագրել որպես «մեծամասնության ուժ»: Այս հայեցակարգում ժողովրդավարության տարբերակիչ առանձնահատկություն է պոլիարխիայի երկրորդ բնութագիրը՝ միջոցառումներին մանակցելու լայն հնարավորությունը, ազդեցությունը կառավարության վարքագծի վրա (համաձայն օլիմպիական սկզբունքի՝ «գլխավորը հաղթանակը չէ, այլ մասնակցությունը»):

Մասնակցային ժողովրդավարության հայեցակարգը հիմնված է քաղաքական մշակույթի տեսակների դասակարգման վրա, ըստ որի, առանձնանում է **գավառական տիպը**, որի ներկայացուցիչները շահագրգռված են միայն իրենց տարածաշրջանի տեղական խնդիրների մեջ և չեն ձգտում մասնակցել պետության կառավարմանը: Իսկ այն տեսակի ներկայացուցիչները, ովքեր մշտապես աջակցում են այն անձին կամ կուսակցությանը, որը տվյալ պահին գտնվում է իշխանության մեջ՝ բնակչության 8-10%-ը, **մասնակցային տիպն** է, որի ներկայացուցիչները շահագրգռված են պետական գործերով և շահագրգռված են դրանցում մասնակցություն ունենալու համար: Համակողմանի հայեցակարգի տեսանկյունից, ժողովրդավարությունը բնութագրվում է հենց այս տեսակի քաղաքական մշակույթի գերակայությամբ:

Մասնակցային գործընթացները, որպես կանոն, իրականացվում են հանրային ոլորտում քաղաքացիների ներգրավմամբ՝ տարաբնույթ և անսպասելի զարգացումներ գրանցելով: Ողջ աշխարհում կիրառվում են մասնակցային ժողովրդավարության գործիքներ՝ **ներգրավելու, մոբիլիզացնելու և խորհրդակցելու** հասարակության տարբեր շերտեր ներկայացնող քաղաքացիների հետ: Միաժամանակ **զարգացվում են հռետորաբանության, թափանցիկության, հաշվետվողականության, խորհրդակցության, քաղաքացիականության, համատեղ կառավարման, համատեղ կամ քաղաքացիակենտրոն որոշումների կայացմանն ուղղված գործիքակազմը**: Որպես ռադիկալ քաղաքական նախագիծ, մասնակցային ժողովրդավարությունն ի սկզբանե ներգրավվել է կերպափոխվող հարթության մեջ, հիմքում ունենալով այն գաղափարը, **որ մասնակցությունը կարող է կերպափոխել պետու-**

[31] **Пейтмэн К.** Массовое участие и теория демократии // Теория и практика демократии. Избранные тексты. / Пер. с англ. Под ред. В.Л.Иноземцева, Б.Г.Капустина. М., 2006. С.35

**թյան և հասարակության միջև ստեղծված անջատողական հարաբերությունները և օգնել քաղաքացիներին իրենց առօրյա կյանքում (աշխատանք, քաղաքական հաստատություններ, բյուրոկրատիա, դպրոց, համալսարան, ընտանիք և այլն)[32]:** Արդի քաղաքական ինստիտուտները հարմարեցված են ներկայիս դարաշրջանին և այն կարելի է համարել համընդհանուր միայն արդիականության շրջանակներում, սակայն այդ ինստիտուտները գործում են հաշվի առնելով ազգային-պատմական առանձնահատկությունները: Համաձայն Ռ. Դալլի ժողովրդավարության համընդհանուր ընթացակարգերը և մեխանիզմները սահմանվում են որպես քաղաքական ինստիտուտներ՝ պաշտոնատար անձանց ընտրությունը, ազատ, արդար և պարբերական ընտրությունները, խոսքի ազատությունը, տեղեկատվության այլընտրանքային աղբյուրների հասանելիությունը, ասոցիացիաների ինքնավարությունը և համընդհանուր քաղաքացիական իրավունքները[33]: Սակայն, առկա են նաև ժողովրդավարական ավանդական ինստիտուտները, ինչպիսիք են սահմանադրությունը, իշխանության ուղղահայաց (օրենսդիր, գործադիր, դատական) և հորիզոնական (կենտրոն և մարզեր), քաղաքական վճիռների արտահայտման ազատությունը և տեղեկատվության բազմազան աղբյուրները, քաղաքական շահերի արտահայտման ազատությունը և զարգացած բազմակուսակցական համակարգը: Ա.Պ. Ցիգանկովայի խոսքերով« կայուն ժողովրդավարական համակարգի անցման էությունը այդ ինստիտուտների սահմանադրականացումը և համախմբումն է[34]: Ժամանակակից միտումների համատեքստում Յու. Նիսսնիչը կարևորում է իրավական սոցիալական պետությունը, քաղաքացիական հասարակությունը, իշխանության ապակենտրոնացումը, պետական մարմինների վերահսկողության արդյունավետ համակարգի ստեղծումը և արդի տեխնոլոգիաների կիրառմամբ քաղաքական մասնակցությունը[35]: Քաղաքացիների մասնակցությունն ուղղակի կամ անուղղակի ձևով ենթադրում է մասնակցություն պետական ներկայացուցչական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, ազգային, տարածաշրջանային և տեղական նշանակության հարցերի լուծմանն ուղղված գործընթացներին:

Այսպիսով, պետք է փաստել, որ մասնակցային ժողովրդավարության արժեքային բազմաչափությունը ենթադրում է ներկայացուցչական ժողովրդավարության հետ համադրություն՝ երկու ձևով՝ միասնական գոյություն կամ փոխլրացում: Ռ. Դալլը տալիս է մի շարք համոզիչ փաստարկներ, որ նույնիսկ ապակենտրոնացված ուղիղ ժողովրդավարությունը չի կարող խուսափել ներկայացուցչությունից: Ռ. Դալլի խոսքերով ներկայացուցչական հաստատությունները ապահովում են քաղաքական հավասարություն, քանի որ դրանք **կանոնակարգված** են և ունեն **հաշվետվողականության** որոշակի նորմեր: Բացի այդ, անխուսափելի է ժամանակի ընթացքում փոքր ապակենտրոնացված քաղաքական միավորների չափի աճը[36]: Մասնակցային ժողովրդավարության հաջողված և ձախողված օրինակների մենք հանդիպում ենք Լատինական Ամերիկայի, Հարավային Եվրոպայի և Աֆրիկայի տարածաշրջանների երկրներում: Անդրադարձ կատարելով մեր տարածաշրջանին, հարկ է նշել, որ Հարավային Կովկասն առանձնանում է իր էթնիկ հակամարտություններով, որոնք լուրջ խոչընդոտներ են տարածաշրջանում կայունության, խաղաղության, տնտեսական և սոցիալական առաջընթացի ապահովման, ինչպես նաև **անվտանգ ապագայի** հաստատման գործընթացներում: Բազմիցս ուսումնասիրություններ են կատարվել տարածաշրջանում գերտերությունների, միջազգային հանրության և այլ դերակատարների շահերի, վերջիններիս պարբերական բախման արդյունքում առաջ եկող հնարավոր սպառնալիքների, մարտահրավերների առաջացման մասին: Հատկանշական է, որ նույնիսկ տարածաշրջանի հիմնական երեք պե-

[32] **Pateman, C.** (1970). Participation and democratic theory. Cambridge: Cambridge University Press.

[33] **Даль Р.** О демократии / пер. с англ. А. С. Богдановского, под ред. О. А. Алякринского. — Аспект Пресс — М., 2000. С.85-86.

[34] **Цыганков А.П.** Современные политические режимы: структура, типология, динамика (учебное пособие). М., 1995. С.157-158.

[35] **Нисневич Ю.** Аудит политической системы посткоммунистической России. М., 2007. С.24-45

[36] **Даль Р.** Демократия и ее критики / Пер. с англ. Под ред. М.В.Ильина. — М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН). — 2003. С. 55-78.

տությունների դոմինանտ ազգերը տարաբնույթ հավակնություններ և խնդիրներ ունեն միմյանց նկատմամբ: Պետք է փաստել, որ այս պետություններում կա համընդհանուր պատկեր, որտեղ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը առերեսվելով հակամարտության վտանգների, ներքին և արտաքին բազմաշերտ սպառնալիքների հետ, լրջորեն թերանում են ժողովրդավարության զարգացման գործընթացում, հիմքում ունենալով տարաբնույթ պատճառներ՝ հասարակության կրթական ցածր ցենզից մինչև միջազգային ասպարեզում տեղի ունեցող գործընթացների լիիրավ անդամ լինելը, քաղաքական ու տնտեսական կայունության խնդիրները: Կարևորելով ազգային ռեսուրսների նպատակաուղղվածությունը առավելապես անվտանգության կարիքների բավարարմանը՝ այս պետությունները սահմանափակում են իրենց ազգային կյանքի սոցիալական բազմազանությունը և դանդաղեցնում ժողովրդավարության ու ազատական տնտեսության ինստիտուցիոնալացումը[37]:

Ամփոփելով, ամրագրենք, որ ժամանակի հոլովույթում մասնակցային ժողովրդավարությունը՝ ուղիղ ժողովրդավարությունից մինչև համախմբված, ունի գերակա մի ընդհանրություն՝ դա մարդու քաղաքացիական ու քաղաքական պատասխանատվությունն է և տարաբնույթ քաղաքական ուժերի նկատմամբ կառուցողական-քննադատական վերաբերմունքի մշակումը:

### Օգտագործված գրականության ցանկ


1. **Այվազյան Վ.**, Մարդու իրավունքներ, Երևան, 2007
2. **Մարգարյան Մ. Մ.**, Անցումային հասարակությունների ժողովրդավարացման գործընթացի առանձնահատկությունները, «21-րդ ԴԱՐ», թիվ 4(6), 2004թ.
3. **Баранов Н.А.**, Современная демократия: эволюционный подход, С.-П., 2008 .
4. **Бегунов, Ю.К.** 13 теорий демократии / Ю.К. Бегунов, А.В. Лукашев, А.В. Пониделко. - СПб. Бизнес-пресса, 2002.
5. **Грачев М. Н., Мадатов А.С.** Демократия: методология исследования, анализ перспектив. М, 2004.
6. **Даль Р.** Демократия и ее критики / Пер. с англ. Под ред. М.В.Ильина. — М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН). — 2003.
7. **Даль Р.** Принятие решения в демократическом обществе: Верховный суд и его влияние на политический курс государства // Теория и практика демократии. Избранные тексты. М., 2006.
8. Международное право; Ответственные редакторы Ю. М. Колосов, Э. С. Кривчикова; Москва; 2007
9. **Мизес Л.** Свобода и собственность // Мизес Л. Либерализм в классической традиции / Пер. с англ. А.В.Куряева. М., 2001.
10. **Нисневич Ю.** Аудит политической системы посткоммунистической России. М., 2007.
11. **Олсон М.** Логика коллективных действий: общественные блага и теория групп // Политология: Хрестоматия / Сост. Б.А.Исаев, А.С.Тургаев, А.Е.Хренов. СПб., 2006.
12. **Пейтмэн К.** Массовое участие и теория демократии // Теория и практика демократии. Избранные тексты. / Пер. с англ. Под ред. В.Л.Иноземцева, Б.Г.Капустина. М., 2006.
13. **Хантингтон С.**, Третья волна. Демократизация в конце XX века. Пер. с англ. Л. Ю. Пантиной. М., 2003
14. **Цыганков А.П.** Современные политические режимы: структура, типология, динамика (учебное пособие). М., 1995.
15. **Шапиро, И.** Переосмысливая теорию демократии в свете современной политики / И. Шапиро // ПОЛИС: Политические исследования. - 2001. - № 3-5.
16. **Шумпетер, Й.** Капитализм, социализм и демократия / Й. Шумпетер. - М.: БЕК, 1995.
17. **Barber B.** Participatory Democracy. // Encyclopedia of Democracy. Vol. 3. New York, 1995.
18. **Bently A.** Process of Government. N-Y., 1908.
19. **Norris, Pippa**. Introduction: The Growth of Critical Citizens? in Critical Citizens: Global Support for Democratic Governance, ed. Pippa Norris Oxford: Oxford University Press
20. **Pateman, Carole** Participation and Democratic Theory Cambridge England: Cambridge University Press (1970) https://is.muni.cz/el/1423/podzim2016/POL401/um/Pateman_Dahl.pdf
21. **Truman David B.** The Governmental Process. Political Interests and Public Opinion. NY: Knopf, 1971. P.14.an Davmental


[37]Ambassador Harry Gilmore, Ambassador Richard Kauzlarich, Ambassador Kenneth Yalowitz. Pay attention to the South Caucasus. CSIS, 2002, January www.csis.org/ruseura/caucasus/pubs/0201_sc.htm: